ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի «ԳԱՅԱՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՕՐԵՆՍԳՐՔԻ 40-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ ՍԴՈ-1675 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2022 թվականի դեկտեմբերի 26-ին Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Գայանե Մանուկյանի դիմումի հիման վրա Հայաստանի Հանրապետության ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 40-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, ՍԴՈ-1675 որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) եզրահանգել է՝

«1. Հայաստանի Հանրապետության ամուսնության և ընտանիքի օրենսգրքի (ուժը կորցրել է 2005 թվականի ապրիլի 19-ին) 40-րդ հոդվածը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որ ամուսնու կարգավիճակը վարչական դատավարությունում հայցվորի համար ինքնին «շահագրգիռ անձի» անփոփոխ կարգավիճակ չի երաշխավորում, եթե գործի փաստական հանգամանքները կամ կիրառելի իրավունքը բացառում է այն»:

Կարևորելով Սահմանադրական դատարանի կողմից արված վերլուծությունները և եզրահանգումները՝ այնուամենայնիվ, հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասը՝ ստորև ներկայացնում եմ հատուկ կարծիք հիշյալ Որոշման վերաբերյալ:

1. Հայաստանի Հանրապետության ամուսնության և ընտանիքի օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) ուժի մեջ է մտել 1970 թվականի հունվարի 1-ին, ուժը կորցրել է 2005 թվականի ապրիլի 19-ին:

Օրենսգրքի՝ «Ամուսնությունը դադարելու ժամանակը» վերտառությամբ 40-րդ հոդվածը սահմանում է.

«Ամուսնությունը դադարած է համարվում ամուսնալուծությունը քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցվելու պահից»:

Ըստ Սահմանադրական դատարան ներկայացված դիմումի՝ դիմողը Օրենսգրքի 40-րդ հոդվածը վիճարկում է երկու հիմքերով.

առաջին՝ դիմողի կարծիքով Օրենսգրքի 40-րդ հոդվածը չի բավարարում իրավական որոշակիության պահանջը: Մասնավորապես՝ դիմողը նշում է, որ «Օրենսգրքի 33 և 40-րդ հոդվածների հակասականությունն իրավական որոշակիության խնդիրներ է առաջացրել իրավակիրառ պրակտիկայում. մի կողմից առկա է լինում դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռ, որի համաձայն՝ ամուսնությունը լուծված է, հետևաբար՝ պետք է ողջամտորեն ակնկալել, որ այդ պահից դադարել է իրավահարաբերությունը, իսկ մյուս կողմից ամուսնությունը դադարած է համարվում գրանցվելու պահից» (26.12.2022 թ. ՍԴՈ-1675 որոշում, էջ 11),

երկրորդ՝ «Դիմողը նշում է, որ ամուսինների իրավունքները և պարտականությունները քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնում համապատասխան գրանցումը կատարելուց հետո միայն դադարած համարելու դեպքում կստացվի, որ դատարանի օրինական ուժի մետ մտած վճիռը ստորադասվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից կատարված պետական գրանցմանը» (26.12.2022 թ. ՍԴՈ-1675 որոշում, էջ 11):

Առաջին հիմքի առնչությամբ հարկ է նշել, որ իրավական որոշակիության հարցերով Սահմանադրական դատարանն արտահայտել է մի շարք իրավական դիրքորոշումներ, մասնավորապես՝ նշել է, որ «Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը» (13.05.2008 թ. ՍԴՈ-753):

Այդ առումով Օրենսգրքի 40-րդ հոդվածում իմպերատիվ կերպով սահմանված դրույթը, համաձայն որի՝ ամուսնությունը դադարած է համարվում ամուսնալուծությունը քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցվելու պահից, բավականաչափ հստակ է և թույլ է տալիս անձանց դրան համապա-

տասխանեցնել իրենց վարքագիծը, միաժամանակ, հնարավորություն է տալիս կանխատեսել այն հետևանքները, որ կարող է առաջացնել տվյալ գործողությունը:

Հարկ է նշել նաև, որ դիմողը չի վկայակոչել որևէ դատական ակտ, որով վերոհիշյալ դրույթը մեկնաբանվել է այլ բովանդակությամբ:

Ինչ վերաբերում է երկրորդ հիմքին, ապա անհրաժեշտ է նշել, որ դիմողը չի ներկայացրել համապատասխան հիմնավորումներ այն մասին, որ ամուսնալուծության վերաբերյալ դատական ակտի առկայության պայմաններում ամուսնալուծությունը միայն պետական գրանցման պահից դադարած համարվելը հակասում է Սահմանադրության որևէ դրույթի: Չհիմնավորելով վիճարկվող դրույթի հակասահմանադրականությունը՝ դիմողը նշում է, որ Օրենսգրքի 40-րդ հոդվածը «հակասում է Սահմանադրությանը, քանի որ իմաստազրկում է դատական պաշտպանությունը»:

Մինչդեռ, իրավական համակարգում առկա են բազմաթիվ դեպքեր, երբ դատական ակտով հաստատված իրավունքն ուժի մեջ է մտնում պետական գրանցման պահից: Դրանով որևէ կերպ չեն նսեմացվում դատական ակտերի դերը և նշանակությունը, ինչպես նաև այդ ակտերի պարտադիր լինելու հանգամանքը:

Ելնելով վերոգրյալից՝ հարկ է նշել, որ դիմումն ակնհայտ անհիմն է, և գործի վարույթն ենթակա էր կարճման, իսկ որոշման եզրափակիչ մասում «շահագրգիռ անձի» կարգավիճակին վերաբերող դրույթներն ուղղակիորեն կապ չունեն վիճարկվող դրույթի սահմանադրահիրավական բովանդակության բացահայտման հետ:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԱՏԱՎՈՐ **Ա. ԹՈՒՆՅԱՆ**

29 դեկտեմբերի 2022 թվականի